# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ԳՈՒ4-ՄԱ-ԱՊՁԲ 03/21

ք. Գյումրի «17» փետրվարի 2021թ

«Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ-ը ի դեմս տնօրեն՝ Ք. Ահարոնյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Պետրովիչ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ռ.Գոլյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են ***10*** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են ***20*** օրից ավելի.

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 405 460/չորս հարյուր հինգ հազար չորս հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն 67 577 /վաթսունյոթ հազար հինգ հարյուր յոթանասունյոթ/: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության ___2___ օրինակ (հավելված N 3):

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված ___2___ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո

ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[20] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[21]

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

---

[0] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*

*Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

[21] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով.

1) Վաճառողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

8.7 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հիմնանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.11 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.12 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.13 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| «Գյումրու թիվ 4 արհեստագործական պետական ուսումնարան» ՊՈԱԿ | «Պետրովիչ» ՍՊԸ |
| ք. Գյումրի, «Անի» թաղ. 11ի 5/2 | ք. Գյումրի Մուշ 2 Թաղ 2-2 58 |
| ՀՎՀՀ 05536355 | ՀՎՀՀ 05535224 |
| Հ/Հ 9002180005872950 | Հ/Հ 2050122035711001 «Ինեկոբանկ» |
| Գյումրիի գանձապետական բաժանմունք | ՓԲԸ Գյումրու մ/6 |
| ............................ | ............................ |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Տնօրեն՝ Բ. Ահարոնյան | Տնօրեն՝ Ռ.Գզյան |
| Կ.Տ | Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

Հավելված N 1
« 17» փետրվարի 2021 թ. կնքված
ԳՌԻ4-ՄԱ-ԱՊՁԲ 03/21 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| համարը | Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգ. (CPV) | անվանումը և ապրանքային նշանը | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավոր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր գինը /ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման հասցեն | ենթակա քանակն ըստ ամիսների 2 | 3 | 4 | 5 | 8 | 10 | 11 |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Լուսավորման սարքեր և էլեկտրական լամպեր | | | | | | | | | | | | | |
| 1 | 31500000 | Էլեկտրական լամպ 15W LED E27 | Էլեկտրական լամպ էկոնոմ 15W LED E 27 համարժեք հզորությունը՝ 110W, սնուցում 230, 50/60 Հց | հատ | 1000 | 30000 | 30 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 15 | | | | 15 | |
| 2 | 31500000 | Էլեկտրական լամպ 18W E27 220-240V | Էլեկտրական լամպ շիկացման թելիկով 220-240Վ լարման, 50 Հց հաճախականության 18Վտ հզորությամբ, կոթառը՝ E27/27 տիպի ԳՕՍՏ 2239-79 կամ համարժեք: | հատ | 1100 | 19800 | 18 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 15 | | | 3 | |
| 3 | 31500000 | Էլեկտրական լամպ 11W E27 220-240V | Էլեկտրական լամպ էկոնոմ 11W LED E 27, սնուցում 230, 50/60 Հց | հատ | 720 | 10800 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 10 | | | | | 5 |
| 4 | 31500000 | Էլեկտրական լամպ 23W E27 220V/50HZ | Էլեկտրական լամպ 23W E27 220V/50HZ պարուրաձև | հատ | 1000 | 2000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 2 | | | | |
| 5 | 31500000 | Էլեկտրական լամպ 48W E27 220-240V LED | Էլեկտրական լամպ 48W E27 220-240V LED | հատ | 2900 | 58000 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | | | | | | 10 |
| 6 | 31500000 | Լամպ LED /10W 75W/ | Լամպ LED Սպառող հզորությունը՝ 10Վտ | հատ | 900 | 10800 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 12 | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | Համարժեք հզորությունը՝ 75Վտ Կոթառը՝ GU5,3 Լույսի գույնը՝ 2700K | | | | | | | | | | | | |
| | | Ընդամենը | | | | 131400 | | | | | | | | | |
| | | Շինարարական նյութեր և հարակից արտադրանք | | | | | | | | | | | | | |
| 7 | 44192620 | Մեխ 15մմ | Մեխ 15մմ: Պողպատի մակնիշը համապատասխան СТ3КП, ГОСТ 4028-63, ТУ 28.7-136-007-2003: Փայտե դետալների և կոնստրուկցիաների միացման համար: Կլոր հատումով և կոնաձև գլխով: | կգ | 800 | 80 | 0,1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 0,1 | | | | | |
| 8 | 44192620 | Մեխ 20մմ | Մեխ 20մմ: Պողպատի մակնիշը համապատասխան СТ3КП, ГОСТ 4028-63, ТУ 28.7-136-007-2003: Փայտե դետալների և կոնստրուկցիաների միացման համար: Կլոր հատումով և կոնաձև գլխով: | կգ | 800 | 80 | 0,1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 0,1 | | | | | |
| 9 | 44192620 | Մեխ 30մմ | Մեխ 30մմ: Պողպատի մակնիշը համապատասխան СТ3КП, ГОСТ 4028-63, ТУ 28.7-136-007-2003: Փայտե դետալների և կոնստրուկցիաների միացման համար: Կլոր հատումով և կոնաձև գլխով: | կգ | 700 | 70 | 0,1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 0,1 | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | 44192620 | Մեխ 40մմ | Մեխ 40մմ: Պողպատի մակնիշը համապատասխան СТЗКП, ГОСТ 4028-63, ТУ 28.7-136-007-2003: Փայտե դետալների և կոնստրուկցիաների միացման համար: Կլոր հատումով և կոնաձև գլխով: | կգ | 700 | 70 | 0,1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 0,1 | | | | | |
| 11 | 44192620 | Մեխ 50մմ | Մեխ 50մմ: Պողպատի մակնիշը համապատասխան СТЗКП, ГОСТ 4028-63, ТУ 28.7-136-007-2003: Փայտե դետալների և կոնստրուկցիաների միացման համար: Կլոր հատումով և կոնաձև գլխով: | կգ | 600 | 60 | 0,1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 0,1 | | | | | |
| 12 | 44192620 | Մեխ 60մմ | Մեխ 60մմ:Պողպատի մակնիշը համապատասխան СТЗКП, ГОСТ 4028-63, ТУ 28.7-136-007-2003: Փայտե դետալների և կոնստրուկցիաների միացման համար: Կլոր հատումով և կոնաձև գլխով: | կգ | 600 | 60 | 0,1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 0,1 | | | | | |
| 13 | 44192620 | Մեխ 80մմ | Մեխ 80մմ: Պողպատի մակնիշը համապատասխան СТЗКП, ГОСТ 4028-63, ТУ 28.7-136-007-2003: Փայտե դետալների և կոնստրուկցիաների | կգ | 600 | 60 | 0,1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 0,1 | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | միացման համար: Կլոր հատումով և կռնածև գլխով: | | | | | | | | | | | | |
| 14 | 44163200 | Կցամաս /խամուտ /ջրի/ 3/4 | Խամուտ 3/4 | հատ | 40 | 120 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 3 | | | | |
| 15 | 44163200 | Կցամաս /խամուտ /ջրի /1/2 | Խամուտ 1/2 | հատ | 40 | 120 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 3 | | | | |
| 16 | 44163170 | Ճկախողովակ 1/2դյույմ 60սմ | ճկախողովակ ջրի 1/2դյույմ 60սմ | հատ | 600 | 1800 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 3 | | | | | |
| 17 | 44191700 | Պտուտակի քողարկիչ /50 հատ/ | Կլոր, ինքնակպչուն շերտ՝ տարբեր երանգների փայտի իմիտացիայով: Օգտագործվում է կահույքագործության մեջ՝ պտուտակների գլխիկները թաքցնելու համար: Թերթի վրա 50 հատ 14մմ տրամագծով | թերթ | 80 | 1600 | 20 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 10 | 10 | | | |
| 18 | 44171300 | Եզրաժապավեն 50մ | Ինքնակպչուն կամ ջերմակպչուն եզրաժապավեն՝ տարբեր երանգների փայտի իմիտացիայով: Փաթույթի երկարությունը 50մ, լայնությունը 20մմ: Օգտագործվում է կահույքագործության մեջ՝ լամինացված ԴՍՊ-ների եզրապատման համար | փաթույթ | 2500 | 5000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 2 | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19 | 44192700 | Գլանակ ներկարարական 10սմ | Գլանակ ներկարարական 10սմ | հատ | 650 | 1950 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 3 | | | |
| | | Ընդամենը | | | | 11070 | | | | | | | | | |
| | | Գործիքներ, փականներ, բանալիներ, կախիչներ, ամրացնող դետալներ, շղթաներ և զսպանակներ | | | | | | | | | | | | | |
| 20 | 44531160 | Պտուտակ 3.0*1.6մմ | Պտուտակ 3.0*1.6մմ | հատ | 2 | 300 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 150 | | | | | | |
| 21 | 44531160 | Պտուտակ 3.5*1,6մմ | Պտուտակ 3.5*1,6մմ | հատ | 3 | 450 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 150 | | | | |
| 22 | 44531160 | Պտուտակ 3.5*35մմ | Պտուտակ 3.5*35մմ | հատ | 2 | 300 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 150 | | | | | | |
| 23 | 44531160 | Պտուտակ 3.5*40մմ | Պտուտակ 3.5*40մմ | հատ | 3 | 450 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 150 | | | | |
| 24 | 44531160 | Պտուտակ 3.5*45մմ | Պտուտակ 3.5*45մմ | հատ | 4 | 600 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 150 | | | | |
| 25 | 44531160 | Պտուտակ 4*40մմ | Պտուտակ 4*40մմ | հատ | 4 | 600 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 150 | | | | |
| 26 | 44531160 | Պտուտակ 4*50մմ | Պտուտակ 4*50մմ | հատ | 5 | 735 | 147 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 147 | | | | | | |
| 27 | 44531160 | Պտուտակ 4*60մմ | Պտուտակ 4*60մմ | հատ | 7 | 1050 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 150 | | | | | | |
| 28 | 44531160 | Պտուտակ 4*70մմ | Պտուտակ 4*70մմ | հատ | 6 | 900 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 150 | | | | | | |
| 29 | 44531160 | Պտուտակ 4,2*38մմ | Պտուտակ 4,2*38մմ | հատ | 6 | 900 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 150 | | | | | | |
| 30 | 44531160 | Պտուտակ 5*35մմ | Պտուտակ 5*35մմ | հատ | 5 | 750 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 150 | | | | | | |
| 31 | 44531160 | Պտուտակ 5*40մմ | Պտուտակ 5*40մմ | հատ | 6 | 900 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 150 | | | | | | |
| 32 | 44531160 | Պտուտակ 5*60մմ | Պտուտակ 5*60մմ | հատ | 8 | 1200 | 150 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 150 | | | | | | |
| 33 | 44531160 | Պտուտակ գլխարկով 4,2*25մմ | Պտուտակ գլխարկով 4,2*25մմ | հատ | 5 | 500 | 100 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 100 | | | | | | |
| 34 | 44531180 | Մանեկ-հեղյուս /5x25մմ/ | Մանեկ-հեղյուս /5x25մմ/ ցինկապատ, պողպատի | զույգ | 11 | 495 | 45 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 45 | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մակնիշ CT10/20, CT10кп/20кп, ԳՕՍՏ 7805-70 | | | | | | | | | | | | |
| 35 | 44531180 | Մանեկ-հեղյուս /6x40մմ/ | Մանեկ-հեղյուս /6x40մմ/ ոչ ցինկապատ, պողպատի մակնիշ CT10/20, CT10кп/20кп, ԳՕՍՏ 7805-70 | զույգ | 12 | 600 | 50 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 50 | | | | |
| 36 | 44531180 | Մանեկ-հեղյուս /8x60մմ/ | Մանեկ-հեղյուս /8x60մմ/ ոչ ցինկապատ, պողպատի մակնիշ CT10/20, CT10кп/20кп, ԳՕՍՏ 7805-70 | զույգ | 19 | 950 | 50 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 50 | | | | |
| 37 | 44531180 | Մանեկ-հեղյուս /8x80մմ/ | Մանեկ-հեղյուս /8x80մմ/ ոչ ցինկապատ, պողպատի մակնիշ CT10/20, CT10кп/20кп, ԳՕՍՏ 7805-70 | զույգ | 39 | 1950 | 50 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 50 | | | | |
| 38 | 44521121 | Փականի միջուկ | Փականի միջուկ 8-10մմ, 3-5 բանալիով | հատ | 3500 | 3500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | | | |
| 39 | 44521120 | Փական դռան | Բարձրությունը 154մմ, մինչև առանցքը լայնությունը 25-35մմ | հատ | 7000 | 7000 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | | | |
| 40 | 44521120 | Շվեցար | Ստանդարտը՝ EN2-EN4, դռան քաշը 40կգ-60կգ, լայնությունը 850մմ-950մմ, փակման ուժը 13-18Նմ | հատ | 12200 | 12200 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 1 | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 41 | 44511260 | Հղկաթուղթ կլոր № 60 | Հղկաթուղթ կլոր՝ Փ-115 № 60 PS 19 EK 60 Պատրաստված է թղթի հիմքի վրա.նախատեսված է փայտանյութերի ոլորտում օգտագործման համար: Փայտե իրերի վերամշակման համար | հատ | 60 | 720 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 6 | | | 6 | | |
| 42 | 44511260 | Հղկաթուղթ կլոր № 80 | Հղկաթուղթ կլոր՝ Փ-115 № 80 PS 19 EK 80 Պատրաստված է թղթի հիմքի վրա. նախատեսված է փայտանյութերի ոլորտում օգտագործման համար: Փայտե իրերի վերամշակման համար | հատ | 60 | 720 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 6 | | | 6 | | |
| 43 | 44511260 | Հղկաթուղթ կլոր № 100 | Հղկաթուղթ կլոր՝ Փ-115 № 100 PS 19 EK 100 Պատրաստված է թղթի հիմքի վրա. նախատեսված է փայտանյութերի ոլորտում օգտագործման համար: Փայտե իրերի վերամշակման համար | հատ | 60 | 720 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 6 | | | 6 | | |

| | | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 44 | 44511260 | Հղկաթուղթ կլոր N° 120 | Հղկաթուղթ կլոր՝ Φ-115 N° 120 PS 19 EK 120 Պատրաստված է թղթի հիմքի վրա: Նախատեսված է փայտանյութերի ոլորտում օգտագործման համար: Փայտե իրերի վերամշակման համար | հատ | 60 | 720 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 6 | | | 6 | | |
| 45 | 44511260 | Հղկաթուղթ կլոր N° 150 | Հղկաթուղթ կլոր՝ Φ-115 N° 150 Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար | հատ | 60 | 720 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 6 | 6 | | | |
| 46 | 44511260 | Հղկաթուղթ կլոր N° 180 | Հղկաթուղթ կլոր՝ Φ-115 N° 180 Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար | հատ | 60 | 720 | 12 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 6 | 6 | | | |
| 47 | 44511260 | Հղկաթուղթ N° 60 | Հղկաթուղթ N° 60 LS318 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար | գծ | 800 | 4000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 1 | 2 | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 48 | 44511260 | Հղկաթուղթ № 80 | Հղկաթուղթ № 80 LS318 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար | գծ | 800 | 4000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | 1 | 2 | | | |
| 49 | 44511260 | Հղկաթուղթ № 100 | Հղկաթուղթ № 100 LS312 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար | գծ | 800 | 4000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 2 | 1 | 2 | | | |
| 50 | 44511260 | Հղկաթուղթ № 120 | Հղկաթուղթ № 120 LS312 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար | գծ | 800 | 4000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | 1 | 1 | | | |
| 51 | 44511260 | Հղկաթուղթ № 180 | Հղկաթուղթ № 180 LS312 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար | գծ | 800 | 4000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | 1 | 1 | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 52 | 44511260 | Հղկաթուղթ № 500 | Հղկաթուղթ № 500 LS312 Պատրաստված է բամբակի հիմքի վրա: Արդյունավետ է հատկապես ներկերի, լաքերի, ծեփանյութերի և փայտանյութերի վերամշակման համար | թերթ | 60 | 300 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | 1 | 1 | | | |
| 53 | 44511400 | Նրբասղոցներ փայտի 130մմ | Նախատեսված է շերտավոր ֆաներայի, փայտի բարակ շերտերի, ծեռքով ձևավոր սղոցման համար 130մմ | տուփ | 40 | 8000 | 200 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 150 | | 20 | 30 | | | |
| 54 | 44511400 | Ստեպլերի կարիչ 31614-10 /1000 հատ / | 31614-10,տուփի մեջ 1000 հատ | տուփ | 900 | 900 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 1 | | | | |
| 55 | 44511400 | Ստեպլերի կարիչ MANNESMANN 486-8, /1000 հատ/ | MANNESMANN 486-8, տուփի մեջ 1000 հատ | տուփ | 700 | 700 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | | | |
| 56 | 44511400 | Ստեպլերի կարիչ MANNESMANN 486-6 /1000 հատ/ | MANNESMANN 486-6, տուփի մեջ 1000 հատ | տուփ | 600 | 600 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | | 1 | | | |
| 57 | 44511400 | Էլեկտրական նրբասղոցի սղոցիկներ /փայտի 5 հատ / | T101AO BOSCH տուփի մեջ 5 հատ | տուփ | 2500 | 2500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | | | |
| 58 | 44511400 | Էլեկտրական նրբասղոցի սղոցիկներ /փայտի 5 հատ / | T101B BOSCH տուփի մեջ 5 հատ | տուփ | 2500 | 2500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 1 | | | | | | |
| 59 | 44511400 | Էլեկտրական նրբասղոցի սղոցիկներ /փայտի 5 հատ / | T144D BOSCH տուփի մեջ 5 հատ | տուփ | 2500 | 2500 | 1 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 1 | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | **Ընդամենը** | | | | 78650 | | | | | | | | | |
| | | **Հաստոցների մասեր և պարագաներ** | | | | | | | | | | | | | |
| 60 | 42671180 | Սղոցի լայն սայր /палатно/ | Մետաղյա մանրասղոց 125*105T | հատ | 70 | 700 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 10 | | | | | | |
| 61 | 42671180 | Նրբասղոցի սայր | Նրբասղոցի մետաղական փոխովող սայրեր | հատ | 40 | 400 | 10 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 10 | | | | | |
| | | **Ընդամենը** | | | | 1100 | | | | | | | | | |
| | | **Կահավորանք** | | | | | | | | | | | | | |
| 62 | 39241130 | Կտրիչ դանակ | Ծեղանկյուն երկաթյա կտրիչ, պլաստմասե բռնակով | հատ | 500 | 1000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 1 | | | | 1 |
| | | **Ընդամենը** | | | | 1000 | | | | | | | | | |
| | | **Ձանազան պատրաստի արտադրանք և հարակից ապրանքներ** | | | | | | | | | | | | | |
| 63 | 44411500 | Փական /ջրի/ 1/2 | Փական փակիչով 1/2 դյույմ | հատ | 2200 | 4400 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 2 | | | | |
| 64 | 44411500 | Փական /ջրի/ 3/4 | Փական փակիչով 3/4դյույմ | հատ | 3500 | 7000 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | | 2 | | | | |
| | | **Ընդամենը** | | | | 11400 | | | | | | | | | |
| | | **Էլեկտրական սարքեր և սարքավորումներ** | | | | | | | | | | | | | |
| 65 | 31685000 | Երկարացման լար 3մ | Երկարացման հոսանքալար՝ 3-6 վարդակով, լարի երկարությունը 3մետր: Յուրաքանչյուր վարդակը ոչ պակաս 10Ա, 250 Վ միացման մանրակներով, ԳՕՍՏ Ռ-51324.1-99 կամ համարժեք: | հատ | 1850 | 5550 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | | | | |
| 66 | 31685000 | Երկարացման լար 5մ | Երկարացման լար՝ 3 վարդակով, լարի երկարությունը 5մետր: Յուրաքանչյուր վարդակը ոչ պակաս | հատ | 2400 | 7200 | 3 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 3 | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | 10Ա, 250 Վ միացման մանրակներով, ԳՕՍՏ Ռ 51324.1-99 կամ համարժեք: | | | | | | | | | | | | |
| 67 | 31686000 | Խրոցակ | Էլեկտրական խրոց 16Ա, 250 Վ, ԳՕՍՏ Ռ 51322.1-99 և ԳՕՍՏ 7396.1-89, անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված "Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի" և ԳՕՍՏ 12.2.007.0-75 | հատ | 200 | 1000 | 5 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 5 | | | | | | |
| 68 | 31684400 | Վարդակ ներքին մոնտաժման համար | Վարդակ պլաստմասսայե UL-94V, 1 տեղանոց, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 MOм, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 °C-ից մինչև +80 °C, սպիտակ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող | հատ | 650 | 1300 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | | | | | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | պահանջների տեխնիկական կանոնակարգի» | | | | | | | | | | | | |
| 69 | 31684400 | Վարդակ արտաքին մոնտաժման համար | Վարդակ պլաստմասսայե UL-94V, 1 port RJ11 բնիկով, 1 տեղանոց, մեկուսիչի էլեկտրական դիմադրությունը՝ R 1000 MOм, աշխատանքային ջերմաստիճանը՝ մինուս 30 °C-ից մինչև +80 °C, սպիտակ: Անվտանգությունը՝ ըստ ՀՀ կառավարության 2005 թ. փետրվարի 3-ի N 150-Ն որոշմամբ հաստատված «Ցածր լարման էլեկտրասարքավորումներին ներկայացվող պահանջների տեխնիկական կանոնակարգի» | հատ | 600 | 1200 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | | | | | |
| 70 | 31651400 | Ժապավեն մեկուսիչ 0.19մմX19մմX10մ | Հոսանքի մեկուսացման համար գլանափաթեթներով պոլիմերային ժապավեն, կապույտ կամ սև գույնի 0.19մմX19մմX10մ | հատ | 150 | 2250 | 15 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | | 5 | | | | 10 | |

| | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 71 | 31651600 | Զգվածքի ժապավեն /պակլի/ 19մմX15մX0.20մմ | Պակլի 19մմX15մX0.20մմ չափերով: Տեֆլոնային ժապավեն նախատեսված խողովակների պարույրների խտացման համար | հատ | 320 | 640 | 2 | ք. Գյումրի Անի թ. 11փ 5/2 | 2 | | | | | | |
